ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐՈՎ

https://doi.org/10.59982/18294359-25.2-pz-04

Վահե Աշոտի Թորոսյան
ի.գ.թ., դոցենտ
ԿԳՄՀՀ, Իրավագիտության ամբիոն
Vaxinak91@mail.ru

Ամփոփագիր

Զինված ուժերում խղճի ազատության և համոզմունքների հիմքով ծառայությունից հրաժարումը համեմատաբար նոր երևույթ է, որի օրենսդրական ճանաչումը դեռևս սկսվել է նախորդ դարասկզբին, առաջին աշխարհամարտի տարիներին Անգլիայում, Դանիայում և Խորհրդային միությունում: Թեև ներկայումս արդի երկրներում պրոֆեսիոնալ բանակի անցնելու հետևողական քայլերի հետևանքով քննարկվող խնդիրը աստիճանաբար վերանում է, այդուհանդերձ այն պահպանում է իր արդիականությունը՝ շոշափելով ազգային և հոգևոր անվտանգության նուրբ կողմերը: Հարցը սրվում է նաև պատերազմին կամավորագրված անձանց դեպքում, որոնք պատերազմի ընթացքում հրաժարվում են ռազմական արշավից կամ ձեռնարկից՝ համարելով, որ այն հակասում է արդար պատերազմի գաղափարին և սեփական խղճի թելադրանքին:

Գիտական հոդվածը վերլուծում է պարտադիր զինվորական ծառայությունից խղճի ազատության և մասնավորապես կրոնական համոզմունքի հիմքով հրաժարվելու իրավունքը, որը նաև կոչվում է այլընտրանքային ծառայության իրավունք: Քննության են ենթարկվում այդ իրավունքի միջազգային իրավական կառուցակարգերը, համոզմունքների հիմնահարցը, հայկական նախադեպը, ինչպես նաև ներպետական կրոնական կազմակերպությունների, ինչպես նաև Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու մոտեցումը այս հարցերում: Որպես եզրահանգում՝ արձանագրվում է, որ խղճի ազատության և համոզմունքների հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարումը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում ճանաչված իրավունք է, որը բնութագրվում է՝ որպես անձի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի առանցքային բաղադրատարր:

Հիմնաբառեր. Բարեխիղճ հրաժարում, մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք, այլընտրանքային ծառայության իրավունք, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի, դավանանք, համոզմունք, զինվորական ծառայություն:

Ներածություն

Ա) Այլընտրանքային ծառայության իրավունքը միջազգային իրավական փաստաթղթերում.

Հաճախ հարց է հնչում, խղճի ազատության և համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարումը կամ այլ կերպ ասած այլընտրանքային ծառայության իրավունքը մարդու հիմնարար իրավունք է, թե՞ դավանանքի ազատության բաղադրատարր: Իսպանիայի սահմանադրական դատարանը 1987թ. նկատեց, որ այն սահմանադրական ինքնուրույն իրավունք է, որը սակայն չի բխում խղճից, քանի որ դա

կենթադրեր պետության գաղափարի ժխտում *[Իսպանիայի Սահմանադրական դատարանի որոշումը]*: Հաջորդիվ կտեսնենք, որ այս մոտեցումը բացարձակ ընդունելություն չգտավ ո՛չ ազգային, ո՛չ միջազգային հարթությունում:

Հարկ է նշել, որ այլընտրանքային ծառայության իրավունքի մասին առաջին անգամ միջազգային մակարդակով անդրադարձ է կատարվել 1967թ. ԵԽԽՎ-ի թիվ 337 բանաձևում: Այն ամրագրվել է Եվրոպական միության «Հիմնարար իրավունքների մասին խարտիայում», ինչպես նաև ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի բանաձևերում՝ բնութագրվելով որպես մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքի հիմնարար ասպեկտ *[Recommendation]*: ՄԱԿ-ի բանաձևերից մեկում նշվում է. *«Խղճի նկատառումներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու հիմքում ընկած են խղճի սկզբունքներն ու հիմնավորումները, այդ թվում՝ խորը համոզմունքները, որոնք բխում են կրոնական, բարոյական, մարդասիրական և նման այլ շարժառիթներից» [ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 1998/77 բանաձև]*:

Այդուհանդերձ այս իրավունքը ուղղակի ամրագրում չի ստացել ոչ Եվրոպական կոնվենցիայում, ոչ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում: Հարկ է նշել, որ դեռևս 1991թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների եվրոպական կոմիտեն Կանադայի առնչությամբ քննված գործով թերևս առաջին անգամ խղճի ազատության նկատառումներով ռազմական գործունեությունից հրաժարումը մեկնաբանեց Դաշնագրի 18-րդ հոդվածով պաշտպանության ենթակա մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի ներքո *[Dr. J. P. v. Canada]*: Հետագայում Կոմիտեն քանիցս վերահաստատեց այս դիրքորոշումը՝ դիտարկելով այն ներքին ազատության (forum internum) բաղադրիչ՝ ընդգծելով, որ այն չի կարող սահմանափակվել նույնիսկ ազգի գոյությանը սպառնացող վտանգի դեպքում *[Jeong and others]*:

Այլընտրանքային ծառայության իրավունքից հետևում է, որ այն պետք է անցնի ողջամտության սահմաններում և կրի քաղաքացիական կամ առանց զենքի զինվորական բնույթ *[1987թ. ԵԽ]*, ինչպես նաև դուրս լինի ռազմական և հրամանատարական համակարգի կառույցներից *[Teliatnikov v. Lithuania]*:

Բ) Համոզմունքների հիմնահարցը

Այն երկրները, որոնք իրենց հիմնական օրենքներում նախատեսել են խղճի ազատության և համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, շեշտադրում են ինչպես կրոնական և այլ համոզմունքները, այնպես էլ բարոյական սկզբունքները: Կան երկրներ, որոնք սահմանում են «ծանրակշիռ համոզմունքները» (Նիդեռլանդներ), «կրոնական, փիլիսոփայական կամ մարդասիրական համոզմունքներ» (Սլովենիա): Ընդ որում, անհրաժեշտ է հաստատել նախ համոզմունքների առկայությունը, ապա նաև անկեղծությունը: Բայց մինչ այդ «համոզմունք» եզրույթի իրավական բովանդակության վերաբերյալ:

Համոզմունքը պետք է տարբերել կարծիքից և տեսակետից. այն բանականությամբ կշռված կարծիքն է, որը բխում է հոգուց: Համոզմունքներին բնորոշ են համոզվածությունը, լրջությունը, հետևողականությունը: Անձը իրավունք է ստանում համոզմունքների վկայակոչմամբ հրաժարվելու սահմանադրական պարտականությունից, եթե վերջինիս կատարումը խորը և անհաղթահարելի դիմադրություն է առաջ բերում իր

ներաշխարհում, պատճառում հոգեկան ցավ և տառապանք: Ակնհայտ է, որ այստեղ անձի համոզմունքները բախվում են հանրային շահին, հետևաբար անհրաժեշտ է պարզել արդյո՞ք համոզմունքների վկայակոչումը զինվորական ծառայությունից նրբորեն խուսափելու միջոց է: Հակառակ պարագայում խղճի ազատության իրավունքը կարող է չարաշահվել զինվորական ծառայությունից հրաժարվելու կեղծ շարժառիթով՝ վտանգելով հասարակական բարօրությունը և պետական անվտանգությունը *[Մուրադյան, Թորոսյան]*: Որպեսզի այդ համոզմունքները իսկապես լինեն հավաստի և արժանահավատ, այլ ոչ թե ծառայեցվեն որպես կամայական պատրվակ՝ հանրային իշխանության մարմինները պարտավոր են ստուգել դրանց իսկությունը և անկեղծությունը՝ ներգրավելով հոգևոր դասի ներկայացուցիչների, զինվորական հոգեբանների և այլ փորձագետների: Համոզմունքների արժանահավատության հետ կապված հարցերը որոշում են ինչպես անկախ հանձնաժողովները, այնպես էլ դատական իշխանության մարմինները: Եղել են դեպքեր, երբ անձը բավարար ապացույցներ չի ներկայացրել իր անկեղծ պացիֆիստ լինելու վերաբերյալ՝ նշելով, որ իր համոզմունքները ձևավորվել են ուսումնառության ընթացքում: Ի հավաստումն դրանց, նա ներկայացրել էր միայն ինքնակենսագրություն և գործատուի կողմից տրված տեղեկանք, որը թույլ չէր տվել նրան օգտվել «Բարեխիղճ հրաժարվողի» կարգավիճակից (conscientious objector status) *[Dyagilev v. Russia]*:

Խնդիրն ավելի է բարդանում, երբ այդ համոզմունքը ի հայտ է գալիս կամ փոփոխվում ծառայության ընթացքում, ինչը թերևս կարող է լրջորեն վտանգել զինված ուժերի մարտունակությունը: Այսպես, Լեհաստանի Սահմանադրական դատարանը ճանաչել է պայմանագրային սպաների խղճի ազատության նկատառումներով զինծառայությունից ազատվելու իրավունքը: Իսկ եթե, այն վտանգի ազգային ավտանգությունը, ապա ինչպես հավասարակշռել ազգային շահը և անձի համոզմունքները: Իսրայելի Գերագույն դատարանը նման հրաժարումը ռազմական դրության ժամանակ որակեց սպառնալիք պետության անվտանգության համար. *«Այնպիսի պլյուրալիստական հասարակություն, ինչպիսին Իսրայելում է խղճի համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից ընտրողաբար հրաժարումը, կարող է թուլացնել մեր ազգային կապերը և ժողովրդական բանակը վերածել ժողովուրդների բանակի՝ բաղկացած տարբեր ստորաբաժանումներից...» [Decision ISR]*:

«Կալաչն ընդդեմ Թուրքիայի» գործով Ստրասբուրգի դատարանը գտավ, որ Թուրքիայի ռազմաօդային սպային պաշտոնից ազատելը իրավաչափ է և պայմանավորված աշխարհիկ պետության հարգման և անօրինական արմատական հայացքների նկատառումներով: Դատարանը արձանագրեց, որ անձը ինքնակամ ընդգրկվելով զինված ուժերի համակարգում, ինքն էր ընտրել իր դավանանքի ազատության սահմանափակումը:

Հարկ է նկատել, որ համոզմունքի հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարումը առավելապես բնորոշ է «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության հետևորդներին և «քվաքերներին» («ընկերների հասարակություն»): Այդուհանդերձ, անձի այս իրավունքից օգտվելու համար որևէ կազմակերպությանը հարելու կամ անդամագրվելու փաստը պարտադիր չէ:

Գ) Հայկական նախադեպը. «Բայաթյանն ընդդեմ Հայաստանի»

Զինված ուժերը և բանակը ազգային անվտանգության կարևոր հիմնասյուներից են: Հայաստանում զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են: ՀՀ սահմանադրությունը երաշխավորելով յուրաքանչյուրի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը նշում է, որ *«յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք» [ՀՀ սահմանադրություն]*:

Ազգային օրենսդրությունում այլընտրանքային ծառայությունը բնութագրվում է զինվորական ծառայությանը փոխարինող ծառայություն, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում: Այն նպատակ ունի ապահովել հայրենիքի և հասարակության առջև քաղաքացիական պարտքի կատարումը *[Այլընտրանքային ծառայության մասին]*: Ամեն ինչ սկսվեց Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործից, որի ամփոփ էությունը հանգում է հետևյալին.

«Եհովայի վկաներ» կրոնական ուղղության հետևորդ Վ. Բայաթյանը 2001թ. հրաժարվելով զինվորական ծառայությունից ազգային դատարանի կողմից դատապարտվել էր ազատազրկման: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ստորին պալատը նախապես գտավ, որ Վ. Բայաթյանի զինծառայությունից խուսափելու համար դատապարտումը իրավաչափ է, հետևապես Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում առկա չէ, քանի որ այլընտրանքային ծառայության իրավունքի ճանաչումը պետության հայեցողության շրջանակներում է: Սակայն Դատարանի մեծ պալատը որակապես այլ մեկնաբանություն տվեց, նշելով, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, ըստ էության, ճանաչել են այդ իրավունքը, հետևապես, այն երկիրը, որ չի ճանաչել պետք է համոզիչ փաստարկներ ներկայացնի, ինչը, սակայն տեղի չէր ունեցել: Հետևապես տեղի է ունեցել անձի խղճի ազատության նկատմամբ ոչ իրավաչափ միջամտություն: Արդյունքում՝ 2011թ. խղճի ազատության հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը նախատեսվեց որպես Կոնվենցիայի 9-րդ հոդվածի պաշտպանության ենթակա իրավունք *[Bayatyan]*:

Մեծ պալատի այս որոշումը ոչ միայն նախադեպային էր, այլև պատմական ինչ-որ իմաստով, քանի որ Եվրոպայում նախատեսվեց նոր իրավունք՝ Խղճի համոզմունքների ազատության հիմքով զինվորական ծառայությունից ազատվելու իրավունքը: Այս դիրքորոշմամբ փաստորեն Եվրոպական դատարանը միացավ ՄԱԿ մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի պաշտոնական դիրքորոշումներին: Փաստ է, որ այսօր աշխարհի գրեթե բոլոր երկրները ճանաչում են այս իրավունքը և հատկապես այս վճռից հետո մեծապես վերանայել են իրենց ազգային օրենսդրությունը և աստիճանաբար ազատ արձակել դատապարտյալներին: Այսքանից զատ, այս նախադեպը հիմնարար նշանակություն ունեցավ Հայաստանի Հանրապետության համար, այսպես կոչված «խղճի կալանավորների» ազատ արձակման, այլընտրանքային ծառայության ներդրման, այնպես էլ մեր պետության դեմ բերված համանման բողոքների բավարարման առնչությամբ *[Tsaturyan]*:

Հետագայում նույն ուղղության հետևորդները, որոնց որպես հավաքարարներ ուղարկել էին ծերանոցներ և հիվանդանոցներ, հրաժարվեցին նաև այլընտրանքային ծառայությունից՝ պնդելով, որ վերջինս չի ապահովում լիարժեք քաղաքացիական ծառայություն, քանի որ վերահսկվում է զինվորական մարմինների կողմից, գրքույկներում նշվում է «ՀՀ Զինված ուժեր», համազգեստը նման է զինվորական համազգեստին, ծառայության տևողությունը համաչափ չէ և այլն: Այս անգամ էլ Եվրոպական դատարանը զարգացնելով իր նախորդ դիրքորոշումը նշեց, որ այլընտրանքային աշխատանքային ծառայությունը գտնվելով զինվորական մարմինների վերահսկողության ներքո՝ բավականաչափ չի առանձնացվել զինվորական համակարգից, իսկ 42 ամիս տևողությունը էականորեն երկար լինելով կարող է ունենալ արժանապատվությունը նվաստացնող և պատժիչ ազդեցություն: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության կողմից նշված անձանց դատապարտումը անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում և խախտել է մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը *[Adyan and others]*:Հայաստանը պարտավորվեց կրոնական համայնքի 17 ներկայացուցիչներին վճարելու շուրջ 112 հազար եվրոյի չափով փոխհատուցում:

Այս խնդիրներով պայմանավորված 2013թ. արմատական վերանայումներ կատարվեցին ներպետական օրենսդրությունում: Հաշվի առնելով, որ միջազգային չափանիշների համաձայն այլընտրանքային ծառայությունը չպետք է գերազանցի պարտադիր զինվորական ծառայությանը ավելի քան 1,5 անգամ, այն էականորեն կրճատվեց: Ձևավորվեց այլընտրանքային ծառայության հարցերով Հանրապետական հանձնաժողով, որը քննության է առնում հրաժարվողների դիմումները: Գործող օրենքը առանձնացնում է.

1. Այլընտրանքային զինվորական ծառայությունը, որը 30 ամիս է, երբ անձի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զենք կրելը, պահելը պահպանելը և օգտագործելը: Այն իրականացվում է զինված ուժերի կանոնագրքերի դրույթներին համապատասխան և արգելվում անձին ծառայության ընդգրկել մարտական ստորաբաժանումներում, տալ մարտական բնույթի հրամաններ:

2.Այլընտրանքային աշխատանքային ծառայությունը, որը 36 ամիս է, երբ անձը առհասարակ հրաժարվում է զինծառայություն անցնել, ուստի այն իրականացվում է ՀՀ զինված ուժերից դուրս: Նրանք յուրաքանչյուր ամիս ստանում են երեսուն հազար դրամական բավարարում, բացի այդ ազատված են երդում տալու պարտականությունից. այն վերապահված է միայն այլընտրանքային զինվորական ծառայողին:

Հարկ է ընդգծել, որ այլընտրանքային ծառայություն անցած քաղաքացիները չեն կարող նշանակվել այնպիսի պետական պաշտոնների, որոնց վրա օրենսդրությամբ դրված են այնպիսի գործառույթներ, որոնք կապված են զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ:

Դ) Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ՀՀ զինված ուժերում

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես ազգային եկեղեցի, ունի ՀՀ զինված ուժերում հոգևոր ծառայություն իրականացնելու իրավունք: Եկեղեցու բարեխնամ գործունեությունը արտահայտվում է այդ թվում նաև՝ զորամասերում մշտական հոգևոր

ներկայացուցիչ ունենալու բացառիկ առանձնաշնորհով *[Հայաստանի Հանրապետության և Հայ առաքելական սուրբ եկեղեցու մասին ՀՀ օրենք]*: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր սպասավորներ հանդիսացող զորակոչիկները սահմանված կարգով զորակոչվում են պարտադիր զինվորական ծառայության և նշանակվում ՀՀ զինված ուժերում առկա գնդերեցների ու գնդերեցների օգնականների հաստիքների: Զորամասում գնդերեցը ոչ միայն հոգևոր հովիվ է, այլև զինվոր, որ ցանկացած պահին խաչը և զենքը ձեռքին կարող է դիրքեր բարձրանալ *[Գնդերեցը՝ զորամասի հոգևոր ծնող]*: Նրանք միաժամանակ համարվում են ՀՀ զինված ուժերի զինծառայողներ, որոնց վրա տարածվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները: Սակայն զարմանալի է այն հանգամանքը, որ Օրենքը արգելում է զինծայողին (այդ թվում նաև՝ եկեղեցու սպասավոր հանդիսացող զինծառայող) ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնելու քարոզչական գործունեություն *[«Զինվորական ծառայության]*: Այս դրույթը ինքնին հակասում է զորամասերում ազգային եկեղեցուն վերապահված առանձնաշնորհմանը, քանի որ անհնար է պատկերացնել զինված ուժերում հոգևոր ծառայությունը առանց հոգևոր ներգործության միջոցների, այդ թվում նաև քարոզչության:

Ինչ վերաբերում է զորամասերում կրոնական միջոցառումներ կատարելուն, ապա ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս կրոնական կազմակերպություններին իրենց անդամ հանդիսացող քաղաքացիների խնդրանքով կազմակերպելու այդպիսիք *[Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին]*, մի բան, որը արգելված է օրինակ Իսպանիայի զինված ուժերում, ընդ որում արգելված է ոչ միայն միավորումների ազատությունը, այլև արտահայտվելու ազատության իրավունքը: Բոլոր դեպքերում այս հարցում պետք է գերակա առաջնահերթությունը վերապահել զինված ուժերի մարտունակության ապահովմանը: Այս առումով պետք է արձանագրել, որ Ազգային եկեղեցու պաշտամունքային ծեսերը իրենց հոգևոր ազդեցությամբ միմիայն նպաստում են զինվորի և սպայի հոգևոր պատրաստվածությանը և ոգու ամրությանը, այդպիսով նաև զինված ուժերի ընդհանուր մարտունակությանը:

Եզրակացություն

Այսպիսով կարելի է եզրահանգել, որ խղճի ազատության և համոզմունքների հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարումը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում ճանաչված իրավունք է, որը բնութագրվում է՝ որպես անձի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի առանցքային բաղադրատարր: Արժանահավատ համոզմունքների առկայության պարագայում այդպիսի հրաժարումը համարվում է բարեխիղճ հրաժարում, քանի որ այն խորը և անհաղթահարելի հակասություն է առաջացնում անձի ներաշխարհում և այդպիսով՝ անհամատեղելի դարձնում պարտականության կատարումը:

Այս բարդ աշխարհաքաղաքական հարացույցում և հակամարտությունների եռացող կաթսայում հարցի էությունը մեզ համար առավել քան կարևորվում է: Հայաստանի Հնարապետությունը շրջապատված լինելով թշնամական երկրներով, գտնվելով պատերազմի և խաղաղության նուրբ եզրագծին, չի կարող անտեսել այս

իրավունքից բխող ազգային և հոգևոր անվտանգային մարտահրավերները: Արցախյան պատերազմը, մարդկային և տարածքային հսկայական կորուստները, մեզ լրացուցիչ զգոնության և սթափության կոչ են ազդարարում՝ պահանջելով անհարկի չտարվել հոգևոր անվտանգության հիմքերը սասանող ձեռնարկներով: «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամները, ելնելով իրենց կրոնական համոզմունքներից, հրաժարվում են զինված ուժերում պարտադիր ծառայությունից՝ դրանով երբեմն հարուցելով հանրության արդարացի զայրույթը: Թեև Հայաստանի դեմ բերված գործը ազդարարեց և նոր որակ հաղորդեց այս իրավունքի միջազգային ճանաչմանը, այդուհանդերձ մտահոգիչ է այն հանգամանքը, որ բարեխիղճ հրաժարումը կարող է պատրվակ հանդիսանալ զինվորական ծառայությունից հրաժարվելու, եթե կուզեք խուսափելու համար, ինչը արդեն քրեորեն պատժելի արարք է: Ի տարբերություն այլ հարանվանությունների ներկայացուցիչների, որոնց համար զինվորական ծառայությունը այսպես կոչված «դավանական բեռ է», ազգային եկեղեցու սպասավորները այդպիսի «հոգևոր արդարացումներ» չեն շահարկում, իսկ հարկ եղած դեպքում նաև զենքը ձեռքին մեկնում են ռազմադաշտ:

Գրականության ցանկ

1. Մուրադյան Մ., Թորոսյան Վ., Կրոնական համոզմունքի ազատության իրավունքի չարաշահման վերաբերյալ, Օրինականություն № 116 2020, էջ 41-87:
2. Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենք, 2-րդ հոդված:
3. Գնդերեցը՝ զորամասի հոգևոր ծնող, www.qahana.am, վերջին մուտքը՝ 09.09.2025թ.:
4. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդված:
5. Իսպանիայի Սահմանադրական դատարանի որոշումը, 27.10.1987թ.:
6. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 7-րդ հոդված:
7. ՀՀ սահմանադրություն, 41-րդ հոդված, 3-րդ կետ:
8. Հայաստանի հանրապետության և հայ առաքելական սուրբ եկեղեցու մասին ՀՀ օրենք, 10-րդ հոդված:
9. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 1998/77 բանաձև:
10. 1987թ. ԵԽ նախարարների կոմիտեի ընդունած R (87) 8 հանձնարարականում:
11. Adyan and others v. Armenia (app. no. 75604/11), 12.10.2017; case of Aghanyan and Others v. Armenia (app. nos. 58070/12 and 21 others) 05.12.2019.
12. Bayatyan v. Armenia (app.no. 23459/03), 07.07.2011.
13. Dr. J. P. v. Canada, Communication No. 446/1991, (HRC).
14. Dyagilev v. Russia (app. no. 49972/16) 10.03.2020.
15. Decision ISR-2002-3-005 High Court of Justice Israel. 30-12-2002. H.C. 7622/02 Zonenstein v. The Chief Military Advocate // URL.
16. Jeong and others v. Republic of Korea, Communications no 1642 to 1741/2007, (HRC), Atasoy and Sarkut v. Turkey, Communications Nos. 1853/2008 and 1854/2008 (HRC).
17. Recommendation 1518/2001 of the Pace: exercise of the right of conscientious objection of military service in the Council of Europe member states, para. 2.
18. Teliatnikov v. Lithuania (app. no. 51914/19) 07.06.2022.

19. Tsaturyan v. Armenia (app. no. 37821/03), 10.01.2012; case of Bukharatyan v. Armenia (app. no. 37819/03) 10.01.2012.

CONSCIENTIOUS OBJECTION FROM MANDATORY MILITARY SERVICE IN THE PURPOSE OF FREEDOM AND CONSCIENCES

Vahe Torosyan
PhD in Law, Associate Professor
IUASA, Chair of Law
Vaxinak91@mail.ru

Abstract

Conscientious objection to service in the armed forces on the basis of freedom of conscience and convictions is a relatively new phenomenon, the legislative recognition of which began at the beginning of the previous century, during the First World War in England, Denmark, and the Soviet Union. Although the issue under discussion is gradually disappearing in modern countries as a result of consistent steps towards a professional army, it retains its relevance, touching upon the delicate aspects of national and spiritual security. The issue is also exacerbated in the case of persons who volunteered for war, who during the war refuse to participate in a military campaign or undertaking, considering that it contradicts the idea of a just war and the dictates of their own conscience.

The scientific article analyzes the right to refuse compulsory military service on the basis of freedom of conscience and, in particular, religious conviction, which is also called the right to alternative service. The international legal framework of this right, the issue of convictions, the Armenian precedent, and the approach of domestic religious organizations, as well as the Armenian Apostolic Holy Church to these issues, are examined. As a conclusion, it is recorded that refusal from compulsory military service on the basis of freedom of conscience and convictions is a right recognized both at the national and international levels, which is characterized as a key component of the right to freedom of thought, conscience, and religion of a person.

Keywords: Conscientious objection, right to freedom of thought, conscience and religion, right to alternative service, Armenian Apostolic Holy Church, religion, belief, military service.

Ներկայացվել է՝ 16.09.2025թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 21.11.2025թ.